ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊՈՆԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐ

ԱՄԻՐՅԱՆ ԱՆԻ
ԳՊՀ դասախոս
էլփոստ՝ a.amiryan@gsu.am

Հոդվածը նվիրված է դատական դեպոնացման ինստիտուտի իրավական կարգավորման հիմնահարցերին:

Հոդվածում ուսումնասիրման առարկա են դարձել ցուցմունքների դեպոնացման հիմքերը, հիմնավորվել է ապագայում այս ինստիտուտի կիրառման անհրաժեշտությունը և կատարվել է հնարավոր վտանգների առաջացման վերաբերյալ վերլուծություն, ներկայացվել են իրավաբան գիտնականների մոտեցումները դատական դեպոնացման ինստիտուտի վերաբերյալ:

Հոդվածում առաջարկ է արվում վերանայել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի՝ մեղադրյալի խոստովանական ցուցմունքների դեպոնացման ինստիտուտին վերաբերող նորմերի բովանդակությունը և ավելացնել անչափահաս տուժողների ցուցմունքների դեպոնացումը՝ որպես առանձին հիմք:

Բանալի բառեր՝ *ցուցմունք, ապացույց, դեպոնացում, վկա, կասկածյալ, մեղադրյալ, տուժող, դատարան, քննիչ, պաշտպան:*

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 41-րդ գլխում ամրագրված է ցուցմունքի դատական դեպոնացման ինստիտուտը: **Դատական դեպոնացումը** (լատ.՝ *dēpōnō՝ ավանդում եմ, թողնում եմ, պահպանում եմ)* մինչդատական վարույթի ընթացքում դատավորի ներկայությամբ անձին հարցաքննելու (ցուցմունքը դեպոնացնելու) ընթացակարգն է:

Ապացույցների դեպոնացումը աշխարհում գործող և ընդունելի ինստիտուտ է: Երբ անձը տարբեր պատճառներով (օրինակ՝ մահամերձ է) չի կարող ներկայանալ դատարան, ապա նախաքննության ընթացքում նրա տված ցուցմունքները «արխիվացվում» են՝ դատարանում ներկայացնելու նպատակով: Խոսքը վերաբերում է բոլոր անձանց՝ բացառությամբ մեղադրյալի: Իսկ մեղադրյալի ցուցմունքների դեպոնացումը բոլորովին նոր ինստիտուտ է

ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ աշխարհում: Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ հնարավոր կլինի պաշտպանի նախաձեռնությամբ քննիչ-դատավորին ներգրավել դեպքի վայրի, առարկաների և փաստաթղթերի զննությանը[1]: Փաստաբանների լիազորությունները դատական իշխանության հեղինակությամբ և ուժով ապահովելու համար կարող է օրենքով ամրագրվել նաև ձեռնարկություններից, կազմակերպություններից տեղեկություններ պահանջելու համար փաստաբանի կողմից դատական կարգադրագիր ստանալու ընթացակարգ: Այսպես, Ս. Պաշինն առաջարկում է օրենսդրությամբ նախատեսել դատավորի կամ քննիչ դատավորի մոտ ապացույցների դեպոնացման ընթացակարգ: Լ. Ա. Վոսկոբիտովան, որպես պաշտպանի կողմից հարցման արդյունքում ձեռք բերված տվյալների օրինականացման եղանակ, նշում է դատարանում ցուցմունքի դեպոնացումը[2]:

Նախագծով ցուցմունքի դատական դեպոնացումը կատարվում է՝

1) մեղադրյալի խոստովանական ցուցմունքի ստացման իրավաչափությունն ապահովելու նպատակով քննիչի միջնորդությամբ,

2) դատաքննությանը ներկայանալու հնարավորություն չունենալու կամ դատաքննության ընթացքում իրավաչափորեն ցուցմունք չտալու հիմնավոր ենթադրության պարագայում՝ պատշաճ ապացուցումն ապահովելու նպատակով քննիչի կամ վարույթի մասնավոր մասնակցի միջնորդությամբ:

Ինչպես նկատում ենք՝ Նախագծով քրեական վարույթի մասնավոր մասնակցին, այդ թվում՝ պաշտպանին, հնարավորություն է տրված ինքնուրույն նախաձեռնել ցուցմունքի դատական դեպոնացման գործընթաց: Փաստաբանի նախաձեռնությամբ ցուցմունքների դեպոնացման ինստիտուտի ներդրումը կնպաստի մինչդատական վարույթում մրցակցության տարրերի զարգացմանը, կամրապնդի ապացույց ձեռք բերելու ոլորտում պաշտպանի ինքնուրույնությունը և կմեղմի պաշտպանի կախվածությունը քննիչից և դատախազից[3]: Ցուցմունքի դեպոնացումը հանդիսանում է քննիչի ու դատախազի հայեցողությունից անկախ և պաշտպանության կողմի նախաձեռնու-

---

[1] Տե՛ս Пашин С. А. Судебные прения в механизме установления истины по уголовному делу: Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Специальность 12.00.09 — Уголовный процесс, М., 1988, էջ 8:

[2] Տե՛ս Воскобитова Л. А. Уголовный процесс, Учебник для бакалавров, М., 2015, էջ 356-358:

[3] Տե՛ս Ղամբարյան Ա. Փաստաբանի նախաձեռնությամբ ցուցմունքների դատական և նոտարական դեպոնացումը՝ փաստաբանի անկախության երաշխավորման միջոց://Օրինականություն, 2014, թիվ 85, էջ 6-11:

թյամբ ձեռք բերված տվյալների դատավարականացման ինքնուրույն եղանակ: Դատարանը չի հանդիսանում մեղադրանքի կողմ և ցուցմունքների դատական դեպոնացման դեպքում կարող է ապահովել քրեական հետապնդման մարմնի և պաշտպանի համար հավասար հնարավորություն: Ի տարբերություն քննիչի աշխատասենյակում վերահսկողությունից դուրս իրականացվող հարցաքննությանը՝ դատական նիստերի դահլիճում պաշտպանի միջնորդությամբ իրականացվող հարցաքննության և ցուցմունքի դեպոնացման դեպքում դատարանը կապահովի վկայի կողմից ամբողջական տվյալների ներկայացումը և այդ տեղեկությունների ամբողջական արձանագրումը, ինչպես նաև կերաշխավորվի ցուցմունքը կամավոր ներկայացնելու հանգամանքը:

Ցուցմունքի դատական դեպոնացման դեպքում հարցաքննությունը թեև իրականացնում է քննիչը, սակայն արդար դատաքննության իրավունքից բխում է, որ այս ընթացակարգում պետք է կիրառվի արդար դատաքննության այն չափորոշիչը, որի համաձայն առաջինը հարցեր է տալիս այն կողմը, ով նախաձեռնել է տվյալ հարցաքննությունը: Պաշտպանի նախաձեռնությամբ ցուցմունքների դատական դեպոնացման դեպքում էապես սահմանափակվում է պաշտպանի տված հարցերը հանելու և այն անպատասխան թողնելու քննիչի հայեցողությունը: Եթե ցուցմունքի դեպոնացման դեպքում, պաշտպանի հարցադրման վերաբերելիության կամ թույլատրելիության հետ կապված, քննիչի և պաշտպանի միջև ծագում է վեճ, ապա պաշտպանի հարցադրման իրավաչափությունը որոշում է դատարանը:

Քրեադատավարական իրավունքի զարգացման ներկայիս փուլում դատական դեպոնացումը ունի սահմանափակ կիրառություն: Այն կարող է կիրառվել միայն այն ժամանակ, երբ հիմքեր կան ենթադրելու, որ վկան կամ տուժողը հետագայում չեն կարող ներկայանալ դատարան կամ կարող են օգտվել ցուցմունք չտալու իրավունքից: Ցուցմունքների դատական դեպոնացման պրակտիկայի ամփոփման հիման վրա հետագայում հնարավոր կլինի անդրադառնալ պաշտպանների նախաձեռնությամբ ապացույցների դատական դեպոնացման այլ դրսևորումների: Ցուցմունքների դեպոնացման այս հիմքը կոչված է պաշտպանության կողմի համար երաշխավորելու Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված հակընդդեմ հարցման (մեղադրյալի՝ իր դեմ վկայած անձանց հարցեր տալու) իրավունքն այն դեպքում, երբ առկա է հիմնավոր ենթադրություն, որ հարցաքննության

ենթակա անձը չի կարող ներկայանալ դատաքննության կամ դատաքննության ընթացքում իրավաչափորեն կարող է հրաժարվել ցուցմունք տալուց: Այս կարգավորման տրամաբանական շարունակությունը Նախագծի 330-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն է, որի համաձայն կողմի միջնորդությամբ և դատարանի որոշմամբ մինչդատական վարույթում կամ դատարանում սույն օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ տրված ցուցմունքի, ինչպես նաև դրան կցված հավելվածների (նկարների, գծագրերի, սխեմաների, լուսանկարների, ձայնագրությունների, տեսագրությունների, տեսաձայնագրությունների, նկարահանումների, տեսաֆիլմերի) հրապարակումը թույլատրվում է, եթե մինչդատական վարույթում անձի ցուցմունքը սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան դեպոնացվել է: Այսպիսով, Նախագծի քննարկված դրույթները կոչված են կանխելու այն իրավիճակը, երբ մինչդատական վարույթում միայն քննիչի ներկայությամբ անձի տված ցուցմունքները, որին պաշտպանության կողմն անմիջականորեն հարցեր տալու հնարավորություն չի ունեցել, կարող են դրվել վերջնական դատական ակտի հիմքում[1]: ՀՀ քրեական դատավարության օրենագրքի նախագիծը մշակող աշխատանքային խմբի անդամ Ռ. Մելիքյանը խոստովանական ցուցմունքի դատական դեպոնացումը դիտարկում է որպես լրացուցիչ պաշտպանության միջոց, որը կոչված է կանխելու քննիչի կողմից խոստովանական ցուցմունքը կեղծելու հնարավորությունը: Այս հարցում առավել հավասարակշռված է Գ. Ղազինյանի դիրքորոշումը. «Եթե մարդը ցուցմունք է տալիս պաշտպանի ներկայությամբ, ապա ավելի ճիշտ է այն դեպոնացնել դատարանի ներկայությամբ, որպեսզի հետագայում չվիճարկեն, որ այն ձեռք է բերվել խոշտանգումների արդյունքում: Իսկ քննարկվող ինստիտուտի ներդրման բացասական կողմն այն է, որ նախաքննության մարմինը կարող է չարաշահել այդ ինստիտուտի գոյությունը և դեպոնացնել մեղադրյալի ցուցմունքը, որի պայմաններում մեղադրյալը դատարանում չի կարող ապացուցել իր անկեղծությունը: Մեր իրականությունը հաշվի առնելով՝ այստեղ առկա են ռիսկեր»[2]: Այսպիսով, վերլուծելով դատաքննությանը ներկայանալու հնարավորություն չունենալու հիմնավոր ենթադրության պարագայում ցուցմունքների դատական դեպոնացման ինստիտուտի վերաբերյալ օրենս-

[1] Տե՛ս Ղամբարյան Ա., Մինչդատական վարույթի բարեփոխումները ՀՀ քրեական դատավարությունում, Գիտագործնական ձեռնարկ, Երևան, 2010, էջ 53-55:

[2] Տե՛ս Ղազինյան Գ., Դեպոնացման ինստիտուտի բացասական ու դրական կողմերը: Հարցազրույց// www.iravaban.net:

դրական կարգավորումները, կարող ենք փաստել, որ վերջինիս ամրագրումը Նախագծում բավական առաջադիմական քայլ է և բխում է ինչպես կողմերի, այնպես էլ արդարադատության շահերից: Սակայն նույնը չենք կարող ասել ցուցմունքների դատական դեպոնացման երկրորդ հիմքի՝ մեղադրյալի խոստովանական ցուցմունքի դեպոնացման վերաբերյալ: Տեսական գրականության մեջ այս ինստիտուտի վերաբերյալ առկա են իրարամերժ կարծիքներ: Այսպես, քննարկվող ինստիտուտի կողմնակիցները նշում են, որ դատավորի մասնակցության անհրաժեշտությունը հարցաքննությանը պայմանավորված է նշված սուբյեկտների նկատմամբ որևէ ճնշումը կամ խոշտանգումը բացառելու հանգամանքով, քանի որ անձը դատավորի ներկայությամբ ավելի անկաշկանդ ցուցմունք կտա, իսկ հետագայում էլ չի փոխի իր կողմից նախաքննության ժամանակ տված ցուցմունքը: Սակայն բոլոր այն դեպքերի համար, երբ անձի նկատմամբ հնարավոր է խոշտանգում կամ ճնշում կիրառված լինի մինչև նրան դատարան տանելը, պետք է վկայակոչել ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիան: Վերջինիս բովանդակությունից բխում է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ ցանկացած անձ, ով պնդում է, թե ինքն այդ պետության իրավազորության ներքո գտնվող ցանկացած տարածքում ենթարկվել է խոշտանգումների, ունենա տվյալ պետության իրավասու մարմիններին բողոք ներկայացնելու և նրանց կողմից իր գործի անհապաղ ու անաչառ քննության իրավունք[1]: Ձեռնարկվում են միջոցներ՝ ապահովելու համար հայցվորի կամ վկաների պաշտպանությունն ընդդեմ վատ վերաբերմունքի կամ ահաբեկման՝ որպես նրա բողոքի կամ վկայության հետևանքի: Միջազգային հիշյալ նորմի ընդունման դեպքում, անկախ այն հանգամանքից՝ մինչդատական վարույթում կասկածյալը կամ մեղադրյալը հարցաքննվել է դատավորի ներկայությամբ, թե ոչ, եթե նա դատական քննության ժամանակ հայտարարի իր նկատմամբ խոշտանգումներ կիրառելու մասին, ապա պետական իրավասու մարմինները պարտավոր են անհապաղ ու անաչառ քննություն իրականացնել: Տվյալ պարագայում այս ինստիտուտի օրենսդրական ամրագրումը աննպատակահարմար է: Նախագիծը մշակող աշխատանքային խմբի անդամ Ա. Թաթոյանը գտնում է, որ դեպոնացված

[1] Տե՛ս «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» 1984 թվականի հոկտեմբերի 10-ի կոնվենցիայի 13-րդ հոդվածը:

խոստովանական ցուցմունքն ընդամենը ապացույց է, և հետագայում մեղադրյալը կարող է հրաժարվել դրանից կամ տալ այլ ցուցմունք: Եթե դեպոնացված ցուցմունքից հրաժարվելու հիմնավորումը համոզիչ է կամ նոր ցուցմունքն առավել արժանահավատ է, ապա դատարանը կարող է դեպոնացված ցուցմունքով հավաստված փաստերը հաստատված չհամարել: Անձը միայն դեպոնացված խոստովանական ցուցմունքի հիման վրա չի կարող դատապարտվել: Այն կարող է անձին դատապարտելու հիմք հանդիսանալ միայն այն դեպքում, եթե հիմնավորվել է պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտված ապացույցների բավարար ամբողջությամբ[1]: Մեղադրյալի խոստովանական ցուցմունքի դատական դեպոնացումը կարող է նպաստել «խոստովանությանն ապացույցների թագուհին է» կարգախոսի հիման վրա ձևավորված իրավակիրառ պրակտիկայի վերականգնմանը: Նախագծում ամրագրված է ապացույցների ազատ գնահատման պահանջը, սակայն իրավաբանական ռեալիզմի տեսանկյունից հարցը դիտարկելիս կարող ենք կանխատեսել, որ դատարանում դեպոնացված խոստովանական ցուցմունքները գործնականում կվերաճեն անհերքելի ապացույցների[2]:

Թեև Նախագիծը հանգամանորեն նախատեսում է ցուցմունքների դատական դեպոնացման ընթացակարգը, ներկայացվող միջնորդությանը և դեպոնացում կատարելու մասին որոշմանը ներկայացվող պահանջները, այնուամենայնիվ, կարծում ենք՝ որոշ հարցեր, կապված մեղադրյալի խոստովանական ցուցմունքների դեպոնացման հետ, շարունակում են մնալ ոչ լիարժեք պարզաբանված կամ չպարզաբանված: Ստորև կանդրադառնանք դրանցից մի քանիսին:

Այսպես, Նախագիծը չի պատասխանում այն հարցին, թե արդյո՞ք մեղադրյալի խոստովանական ցուցմունքները դեպոնացրած դատարանը կարող է լինել գործն ըստ էության լուծող դատարան. չէ՞ որ տվյալ դեպքում վերջինիս մոտ կարող է կանխակալ վերաբերմունք առաջանալ: Համաձայն Նախագծի 15-րդ հոդվածի 3-րդ մասի՝ արդարադատություն իրականացնելիս կամ դատական այլ երաշխիքներ ապահովելիս դատավորը պարտավոր է լինել և երևալ անկողմնակալ: ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի հա-

---

[1] Տե՛ս Թաթոյան Ա., Քրեական դատավարության նոր օրենսգիրքը կօգնի բարձրացնել վստահությունը դատարանների հանդեպ: Հարցազրույց//www. iravaban.net (13.03.2014):

[2] Տե՛ս Перекрестов В. Н., Соловьева Н. А., Уголовно-процессуальное значение признания вины в России, монография, М., Изд. Юрлитинформ., 2014, էջ 38-39:

մաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային եւ ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Այս դրույթների ամրագրումը օրենքի մակարդակով կոչված է երաշխավորելու յուրաքանչյուր անձի՝ իր գործի արդար դատաքննության իրավունքը անկողմնակալ դաատավորի կողմից: Կարծում ենք, որ Նախագծում ստեղծված այս անորոշությունը հնարավոր է վերացնել հետևյալ եղանակներից որևէ մեկով. կա՛մ սահմանել արգելք խոստովանական ցուցմունքը դեպոնացրած դատարանի կողմից հետագայում գործն ըստ էության քննելու համար, կա՛մ սահմանել պաշտպանության կողմի իրավունքը՝ առարկելու գործի ըստ էության քննությունը նույն դատարանի կողմից իրականացնելու վերաբերյալ, եթե հիմնավոր կասկած կա, որ դատարանը կանխակալ վերաբերմունք կարող է ցուցաբերել: Լիարժեք իրավակարգավորման դեպքում ենթադրվում է, որ մենք կառաջնորդվեինք առաջին տարբերակով և կարգելեինք նույն դատարանին գործի ըստ էության քննություն կատարել: Սակայն, հաշվի առնելով ՀՀ տարածքի փոքր չափերը, դատարանների ծանրաբեռնվածությունը և ռեսուրսների սակավությունը, կարծում ենք՝ ավելի գործուն և նպատակահարմար է երկրորդ տարբերակը:

Նախագծի 309-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ դատարանն ապահովում է սույն օրենսգրքով սահմանված հարցաքննության ընթացակարգի պահպանումը, ինչպես նաև ցուցմունքի դեպոնացման ընթացքում հակընդդեմ հարցման իրավունքի իրականացումը: Թեև ինքնին ողջունելի է ցուցմունքների դատական դեպոնացման ժամանակ հակընդդեմ հարցման իրավունք ունեցող անձանց մասնակցությունը, սակայն այս կարգավորումը հակասում է Նախագծի պահանջներին, քանի որ մեղադրյալը հարցաքննվում է այլ անձնացից անջատ: Քննիչը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի մեղադրյալը չհաղորդակցվի տվյալ վարույթի շրջանակներում հարցաքննված կամ հարցաքննման ենթակա այլ անձի հետ: Անմեղության կանխավարկածի սկզբունքի մեջ արմատավորված էական երաշխիք է ոչ միայն իր դեմ ցուցմունք չտալու, այլև մեղքը չխոստովանելու իրավունքը: Միջազգային-իրավական նորմերով սահմանվում է, որ «անձի դեմ առաջադրված մեղադրանքի հարցը որոշելիս յուրաքանչյուր անձ, լիակատար հավասարության պայմաններում ունի իր դեմ ցուցմունք տալու կամ մեղքը խոստովանելու

պարտադրանքից ազատ լինելու իրավունք»[1]: Միաժամանակ, ամրագրվում է, որ «իրավապահ մարմիններն անպատեհ կերպով չեն օգտագործում կալանավորված կամ ազատազրկված անձի վիճակը՝ նրան խոստովանելուն կամ ինքն իրեն այլ կերպ մեղսագրելուն կամ ցանկացած այլ անձի դեմ ցուցմունք տալուն հարկադրելու նպատակով»[2]: Խոշտանգումների, դաժան, անմարդկային վերաբերմունքի արգելքին անդրադառնալով՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր նախադեպային որոշումներում ամրագրել է, որ անմարդկային վերաբերմունքին առնչվող լուրջ հայտարարությունները պետք է ամբողջական քննության ենթարկվեն: Իշխանություններն իրենց իրավասության շրջանակներում պետք է ձեռնարկեն բոլոր ողջամիտ քայլերը՝ միջադեպին առնչվող ապացույցները, ներառյալ ականատեսների ցուցմունքները և դատաբժշկական փորձաքննության ապացույցներն ապահովելու ուղղությամբ[3]: Այն դեպքում, երբ անձն արգելանքի վերցվելիս գտնվել է լավ առողջական վիճակում, սակայն ազատ արձակվելու ժամանակ հայտնաբերվում են վնասվածքներ, ապա այդ վնասվածքների առաջացման պատճառների վերաբերյալ հավաստի բացատրություններ տալու պարտականությունը կրում է պետությունը[4]:

Մեղադրյալի խոստովանական ցուցմունքների դեպոնացման ինստիտուտը կարող է արդյունավետ գործիք ծառայել ամբաստանյալների նկատմամբ խոշտանգումները և դաժան, անմարդկային վերաբերմունքի դրսևորումները կանխելու համար: Սակայն կարծում ենք՝ իրականում նշված ինստիտուտը չի կարող խոչընդոտել քննիչի կողմից նույն այդ անձանց նկատմամբ ճնշում կամ խոշտանգում կիրառելու և դրանից հետո դատավորի ներկայությամբ նրանց հարցաքննելու համար հատկապես այն դեպքերում, երբ անձի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված լինի կալանքը, երբ անձն առավելապես գտնվում է քրեական հետապնդման մարմնի անմիջական հսկողության ներքո, իսկ հարցաքննությանը դատավորի մասնակցությունն ունի հատվածային բնույթ:

Նախագծի բացթողումներից կարելի է համարել այն, որ վերջինս չի նախատեսում անչափահաս տուժողների և վկաների ցուցմունքների դատա-

---

[1] Տե՛ս Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի հոդված 14(3.) է կետ:

[2] Տե՛ս ԵԱՀԿ-ի 1991 թվականի Մոսկովյան փաստաթղթի պարագրաֆ 23.1:

[3] Տե՛ս Tanrikulu Tanrikuluv. Turkey, ՄԻԵԴ վճիռ 8 հուլիս 1999:

[4] Տե՛ս Aksoy v. Turkey, ՄԻԵԴ վճիռ, 18 դեկտեմբերի 1996:

կան դեպոնացման առանձին հիմք: Մինչդեռ մի շարք միջազգային փաստաթղթերում և առանձին պետությունների քրեական դատավարության օրենսգրքերում նախատեսված է անչափահաս տուժողների ցուցմունքների դատական դեպոնացման հնարավորություն:

Այսպիսով, ապացույցների դեպոնացումը այն դատավարական միջոցն է, որը կարող է նպաստել ապացուցման ոլորտում փաստաբանների ինքնուրույնությանը: Դատավարագետների և օրենսդրի խնդիրն է գտնել այն արդյունավետ ուղիները, որոնք հնարավորություն կտան ընդլայնել մինչդատական վարույթում դեպոնացման ինստիտուտի կիրառման ոլորտները՝ ընդգրկելով ինչպես ցուցմունքների, այնպես էլ այլ ապացույցների դեպոնացումը:

Ի մի բերելով տեսական աղբյուրների ուսումնասիրությունները և արտասահմանյան երկրների իրավակարգավորումների վերլուծությունը՝ գտնում ենք, որ ցուցմունքների դատական դեպոնացման հիմքերից մեկի (դատաքննությանը ներկայանալու հնարավորություն չունենալու կամ դատաքննության ընթացքում իրավաչափորեն ցուցմունք չտալու հիմնավոր ենթադրության պարագայում՝ պատշաճ ապացուցումն ապահովելու նպատակով՝ քննիչի կամ վարույթի մասնավոր մասնակցի միջնորդությամբ) օրենսդրական կարգավորումը հստակ է, գոյությունն արդարացված է և ուղղված է դատական քննության արդյունավետ իրականացմանը, իսկ ինչ վերաբերում է մեղադրյալի խոստովանական ցուցմունքների դեպոնացմանը, ապա այս ինստիտուտի կարգավորմանը նվիրված Նախագծի որոշ նորմեր հստակեցման կարիք ունեն:

Այսպիսով, առաջարկում ենք վերանայել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի Նախագծի՝ մեղադրյալի խոստովանական ցուցմունքների դեպոնացման ինստիտուտին վերաբերող նորմերի բովանդակությունը և ավելացնել անչափահաս տուժողների ցուցմունքների դեպոնացումը որպես առանձին հիմք:

JUDICIAL DEPOSITING AS A COMPONENT OF THE RIGHT TO A FAIR TRIAL

AMIRYAN ANI
GSU Lecturer
e-mail: a.amiryan@gsu.am

The article is devoted to the issues of legal regulation of the institute of judicial depositing. The subject of the study was the grounds for depositing testimonies; the necessity of using this institute in future was substantiated, an analysis of the possible dangers was carried out, the approaches of legal scholars regarding the institute of judicial depositing were presented.

The article proposes to review the content of the norms of the draft Code of the RA Criminal Procedure related to the institute of depositing of confessions of the accused, and to increase the depositing of juvenile victims' testimonies as a separate basis.

Keywords: *testimony, evidence, depositing, witness, suspect, accused, victim, court, investigator, defender.*

СУДЕБНОЕ ДЕПОНИРОВАНИЕ КАК КОМПОНЕНТ ПРАВА НА СПРАВЕДЛИВОЕ СУДЕБНОЕ РАЗБИРАТЕЛЬСТВО

АМИРЯН АНИ
Преподаватель ГГУ
электронная почта: a.amiryan@gsu.am

Статья посвящена вопросам правового регулирования института судебного депонирования. Предметом изучения стали основы депонирования показаний, была обоснована необходимость применения этого института в будущем, проведен анализ возникновения возможных опасностей, представлены подходы ученых-юристов относительно института судебного депонирования.

В статье предлагается пересмотреть содержание норм проекта Уголовно-процессуального кодекса РА, относящихся к институту депонирования признательных показаний обвиняемого, и увеличить депонирование показаний несовершеннолетних потерпевших в качестве отдельного основания

Ключевые слова: *показания, доказательство, депонирование, свидетель, подозреваемый, обвиняемый, потерпевший, суд, следователь, защитник.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 11.08.2021թ.:
Հոդվածը գրախոսվել է 09.10.2021թ.: